314 ***ԽԳ.***[1] *Աշխարհ՝ Տապռաբանիա, է մեծ կղզի Հնդկաց՝* [37ա] *քան զամենայն կղզիս ընդհանուր*[2] *տիեզերաց, ունելով զերկայնութիւն ի հիւսի՛սո[յ]*[3] *ի հարաւ հազար հարիւր*[4] *մղոնաւ, եւ հինգ հարիւր տասն*[5] *մղոնաւ զլայնութիւն՝ յելից ի մուտս կոյս, յերի կալով Հնդկաց:* 315 *Եւ սահմանի յամենայն կողմանց Հնդկա[յ]ին պեղագոսաւն*[6]*:* 316 *Եւ լինի ի նմա հրիզոն, որպէսէ կորեակ է*[7]*, եւ սնկր[ո]ւիլ*[8]*, եւ [բովիճայք եւ]*[9] *բիւրեղ, եւ յակունթ եւ այլ գոհար ակունք, եւ արծաթ եւ ոսկի շատ, փե[ւ]ղք*[10] *եւ վագերք:* 317 *Եւ ունի լերինս երկուս*[11] *ի միջոցին*[12]*, մին կոչի Դալիուբա[յ], որ արձակէ երկուս*[13] *գետս:* 318 *Եւ միւսն կոչի Մալիա, որ արձակէ երեք*[14] *գետս:* 319 *Եւ լինի անդ փայտս*[15] *անփուտս, եւ սնկր[ո]ւիլ*[16] *եւ մարգարիտ ազնիւ, եւ ակն ամենագոհար:* 320 *Քանզի ասեն, թէ կա[յ] երկու*[17] *քաղաք՝ հեռի ի միմեանց հարիւր յիսուն*[18] *մղոնաւ, մին կոչի Մանակոր, եւ մին կոչի Ռոյան, եւ ի մէջ նոցա լեառն մի՝ Գայլ աւէ*[19] *անուն, յորմէ բղխէ գետ. ակն ամենագոհար*[20] *անդ գտանի:* 321 *Եւ երկոտասան*[21] *ազգ են հիւսի՛սա[յ]ին*[22] *կողմամբն, որ հանապազ զգլուխս իւրեանց վարսիւք կնոջ պսակեալ ունին:* 322 *Յորոց երկու*[23] *ազգն կոչին Հացածանք եւ Հացա[յ]ինք:* 323 *Իսկ ի հարաւ կոյս դաշտք են՝ փղաց*[24] *ճարակք:* 324 *Եւ ասեն, թէ մին ազգն էգք են բնակիչք աշխարհին, եւ ի փի՛ղաց*[25] *կուսէ ժամանակ ինչ* [37բ] *ի տարւոջն շունք անցանին եւ խառնակին ընդ կա՛նայսն*[26]*, եւ յղացեալ՝ ծնանին երկուորիս, զմիւսն՝ կորիւն, եւ զմիւսն՝ աղջիկ*[27]*, եւ կորիւնք անցանեն ընդ գետն առ հարսն, եւ աղջկացն*[28] *մնալով առ մա՛րսն. բա[յ]ց*[29] *ես այլաբանութիւն կարծեմ, որպէս վասն Ամազոնացն պատմի յԱղէքսանդրի*[30] *գիրսն՝ զոր Թ[ո]ւրաւլաց*[31] *ազգէն*[32] *այլաբանեալ:* 325 *Եւ Պտղոմէոս*

1 *V* լէ, *S* Լ.Ջ. *փխ* ԽԳ. *(վեր.՝ ըստ նախորդ աշխարհահամարների. հմմտ. նաեւ նախ. Բ.3-ի ծնթ.)*

2 *V* ընթհանուր *փխ* ընդհանուր *(վեր. Սուքրեանի, տե՛ս բարբառային* **Դ → Թ***)*

3 *V* հիւսիւսո *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց)*

4 *V* ռճ

5 *V* շժ

6 *V* պեղագոտաւն *փխ* պեղագոսաւն *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս բոլորագիր* **ս → տ***)*

7 *V* որ է կորեկ է, *S* որ է կորեակ *փխ* որպէսէ կորեակ է *(վեր.)*

8 *VS* սնկրւիլ *փխ* սնկր[ո]ւիլ *(վեր., հմմտ. նախ. Ե. 310՝* «սնկրու[է]ղ» *եւ Ե.319՝* «սնկր[ո]ւիլ»*)*

9 *VS չիք* բովիճայք եւ *(վեր.՝ ըստ համառօտի, որի խմբագրած-պահպանածն է.* «Լինի ի սմա (*DPv* նմա) ոսկի եւ արծաթ, եւ ակունք պատուականք (*AE* ակունս պատուականս) եւ բովիճայք (*AE* բովոճայք). լինի անդ փիղք (*A* եւ փիղք) եւ վագերք». *հմմտ. վերեւում, նախ. Ե.303՝* բո[յ]աճառս. *տե՛ս* **եւ բ… … եւ բ…***)*

10 *VS* փեղք *փխ* փե[ւ]ղք *(վեր.՝ ըստ նախորդի՝ նախ. Դ.34՝* «զփիւղ»*. տե՛ս նաեւ նախ. Ե.324՝* «փիղաց»*)*

11 *V* բ, *S* երկու *փխ* երկուս *(վեր., հմմտ., օր.՝ նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*

12 *S* միջոցի *փխ* միջոցին *(V)*

13 *V* բ, *S* երկու *փխ* երկուս *(վեր., հմմտ., օր.՝ նախ. Ա.27, Բ.37, Գ.47, Դ.30, Ե.88)*

14 *V* գ

15 *S* փայտ *փխ* փայտս *(V)*

16 *V* սնկրւիլ *փխ* սնկրուիլ *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախ. Ե.310՝* «սնկրու[է]ղ» *եւ Ե.316՝* «սնկր[ո]ւիլ»*)*

17 *V* բ

18 *V* ճծ

19 *S* Գայլաւէ *փխ* Գայլ աւէ *(V)*

20 *V* ամէնագոհար *փխ* ամենագոհար *(վեր. Սուքրեանի. հմմտ. նախորդ նախադասութեան մէջ եւ նախ. Ե.55, 260, 319)*

21 *V* ժբ

22 *VS* հիւսիւսա[յ]ին *փխ* հիւսի՛սա[յ]ին *(վեր.՝ ըստ այլոց)*

23 *V* բ

24 *VS փղուց փխ փղաց (վեր., հմմտ. 2 տող ստորեւ. վերեւում կային նաեւ* փեղք *(նախ. Դ.40, 48, Ե.302, 305, 316). նախ. Դ.34-ում* զփիւղ *է)*

25 *V* փիղաց *փխ* փղաց *(վեր. Սուքրեանի. տե՛ս նախորդ ծնթ.)*

26 *V* զկայնայս *[յ-ն գրուած է* **ան***-ի տակ] փխ* զկանայս *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախորդների, օր.՝ նախ. Ե.78)*

27 *V* աղճիկ *փխ* աղջիկ *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Ջ → Ճ***)*

28 *V* աղճկացն *փխ* աղջկացն *(վեր. Սուքրեանի. տե՛ս բարբառային* **Ջ → Ճ***)*

29 *V* մայրսն. բաց *փխ* մարսն. բայց *(վեր. Սուքրեանի՝ ըստ նախ. Ա.4, Բ.19, Գ.6, Դ.23, Ե.42, 326 եւն)*

30 *S* յԱղեքսանդրի *փխ* յԱղէքսանդրի *(V)*

31 *VS* Թւրաւլաց *փխ* Թ[ո]ւրաւլաց *(վեր., բառի մօտ Սուքրեանի դրած հարցականն աւելորդ է թւում)*

32 *S* ազգ են *փխ* ազգէն *(V)*